

թագեր կամ նարոտներ կապելէ յետոյ, երկրորդ աղօթք մը արտասանելով կը վերցնէ զանոնք՝ վերջացնելով խորհրդակատարութիւնը:

**ԳԱԼԻԼԻՈՅ ԿԱՆԱ ՔԱՂԱՔԻՆ  
ՀԱՐՍԱՆԻՔԸ**

Հայ Եկեղեցին կ'աւարտէ Պսակի խորհուրդը մէջբերելով Յիսուսի, իր մօր Մարիամի, եւ աշակերտներուն Կանա քաղաքին մէջ տեղի ունեցած հարսանիքը, ուր Յիսուս վեց տակառներու մէջ լեցուած ջուրը գինիի վերածեց՝ իր առաջին հրաշքը գործելով: Այս միջադէպը խորհրդաւոր իմաստ մը կ'ընծայէ հարսին եւ փեսային, երբ քահանան բաժակ մը գինի օրհնելով կու տայ անոնց, որպէսզի խմեն անկէ, իր հակիրճ աղօթքին մէջ յիշելով Յիսուսի ներկայութիւնը: Այս պարագան զգայուն կը դարձնէ խորհուրդին կատարումը, որպէսզի նորաստեղծները իմանան թէ Յիսուս, Տիրամայր Մարիամ եւ աշակերտներ եւս հրաւիրուած են իրենց պսակադրութեան եւ ուղղակի ստացած Տիրոջ օրհնութիւնը:

**Դոկտ. Տ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան**



Western Diocese of the Armenian Church of North America  
3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504  
Tel.: (818) 558-7474 Fax: (818) 558-6333  
Email: info@armenianchurchwd.com www.armenianchurchwd.com  
Printed by Diocesan Press

2009

**ՍԲ. ՊՍԱԿԻ ԿԱՍ  
ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴԸ**



**ՍԲ. ՊՍԱԿԻ ԿԱՍ  
ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴԸ**

**Ի՞ՆՉ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ**

Եկեղեցւոյ եօթը խորհուրդները Սբ. Հոգիի շնորհները (պարգեւները) կը բաշխեն հաւատացեալներուն: Անոնք «տեսանելի միջոցներն են աստուածային «անտեսանելի» ներկայութիւնն ու զօրութիւնը բերելու հաւատացեալներու կեանքին մէջ, որքան ատեն որ այդ խորհուրդները Քրիստոսի կողմէ հաստատուած արարքներ են ու կը կատարուին իր իսկ ձեռքով: Այդ պատճառով անոնք սուրբ են: Խորհուրդները արարողութիւններ չեն, այլ Քրիստոսով գործուած միջոցներ՝ համաձայն իր հրահանգներուն: Խորհուրդները կը կատարուին ձեռնադրեալ եւ օծեալ պաշտօնեաներու ձեռքով միայն:

**ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԷՈՒԹԻՒՆԸ**

Եկեղեցի մը առանց խորհուրդներու կը մնայ անգործօն եւ ապարդիւն: Ըսողներ կան թէ Սբ. Գիրքին քարոզութիւնն ու զայն կեանքի վերածելը բաւական է քրիստոնէային համար, եւ թէ խորհուրդները աւելորդ կը մնան Սբ. Գիրքին կողքին: Սակայն անոնք կը մոռնան որ խորհուրդները ծնունդն են նոյն Սբ. Գիրքին եւ հաստատուած Տիրոջ Յիսուսի Քրիստոսի հրահանգով:

**ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԲ Է**

Հայ Եկեղեցին ամուսնութեան խորհուրդը Պսակադրութիւն կը կոչէ, հարսին ու փեսային միութիւնը հիմնելով նորակազմ փոքրիկ թագաւորութեան վրայ, որուն թագաւորն է փեսան եւ հարսն ալ՝ թագուհին: Այդ փոքրիկ թագաւորութիւնը եկեղեցւոյ շնորհին ենթակայ մնալով կը դառնայ իսկական բաժինը Մեծ Թագաւորութեան Քրիստոսի Սուրբ Եկեղեցիին: Աստուծոյ հրահանգն էր առաջին մարդուն եւ կնոջ «երթալու եւ պտղաբեր դառնալու», ինչպէս կը կարդանք Ծննդոց Գիրքին մէջ: Աստուած հիմնադիրը ըլլալով այդ մարդու եւ կնոջ սուրբ միաւորումին, հաստատեց նաեւ առաքինի կեանքի եւ բարոյական հասկացողութեան մնայուն նպատակները, որոնք պիտի նպաստէին երկրի վրայ իր Թագաւորութեան աճումին:

*Ամուսնութեան Խորհուրդը կատարողը Քրիստոս ինքն է՝ քահանային միջոցաւ եւ Սբ. Հոգիի ներգործութեամբ, ինչպէս միւս Խորհուրդներու պարագային...*

**ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԸՆ Է**

Միայն Քրիստոսի եկեղեցին է որ կը միացնէ այրը կնոջ՝ քահանային ձեռքով, որ Քրիստոս Յիսուսը կը ներկայացնէ: Ամուսնութեան խորհուրդը կատարող Քրիստոս ինքն է՝ քահանային միջոցաւ եւ Սբ. Հոգիի ներգործութեամբ, ինչպէս միւս խորհուրդներու պարագային, եւ այդ պատ-

ճառով ալ Սուրբ Խորհուրդ մըն է, որ եկեղեցիէն դուրս որեւէ հաստատութիւն կամ հեղինակութիւն իրաւասու չէ կատարելու զայն յանուն քրիստոնէութեան: Յիսուս իր քարոզութեան ընթացքին վերանորոգեց ամուսնութեան սրբութիւնը, աւելցնելով որպէս իրահանգ բարոյական բարձրագոյն հասկացողութիւն մը, շեշտելով մանաւանդ այր եւ կնոջ ցկեանս միաւորումը, հեռացնելով ամէն մտածում եւ գործադրութիւն այդ միութիւնը խախտելու եւ բաժնելու եւ իրենցմէ դուրս յարաբերութիւններ հետապնդելու: Յիսուսի դատողութեամբ այր եւ կնոջ իրարմէ բաժանումը պիտի առաջնորդէր մեծագոյն մեղքի՝ պոռնկութեան եւ շնութեան:

*Առանց Մկրտութեան երկրասարդ Տը չի կրնար Պսակի Խորհուրդին դիմել...*

**Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Աստուած ինք ճշտած է ամուսնութեան նպատակը, ըսելով որ աճեցէք եւ բազմացէք: Որդեծնութիւնը եւ սերունդներու յառաջացումը ամուսնութեան գերագոյն նպատակն է: Այդ պատճառով անհրաժեշտ է որ զաւակները առաքինի ծնողներու զաւակներ ըլլան՝ հետեւելով Աստուծոյ նպատակի իրագործման: Եկեղեցին Աստուծոյ ընդարձակ ընտանիքն է, որ կը կազմուի սուրբ եւ մաքուր ամուսնութենէ ծնած սերունդներով: Ամուսնութիւնը սուրբ կը մնայ, եթէ ծնողներ չբաժնեն ինչ որ Աստուած միացուցած է: Ամուսնալուծումը մեղքի

դուռը կը բանայ եւ կը խանգարէ Աստուծոյ նպատակը:

**ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ**

Պօղոս Առաքեալ կատարեց այս սքանչելի բաղդատութիւնը, ըսելով թէ Քրիստոս փեսան եղաւ իր հարսին՝ որ է Եկեղեցին: Եւ ինչպէս որ առանց այդ միութեան եկեղեցի չի կրնար գոյանալ, նոյնպէս ալ ամուսինն ու կինը միաւորուած պէտք է մնան ցկեանս, որպէսզի իրենց տունը, ընտանիքը մնան եւ գոյատեւեն: Առաքեալը կ'ըսէ նաեւ թէ ինչպէս որ Քրիստոս սիրեց իր եկեղեցին ու ինքզինքը զոհաբերեց անոր համար, նոյնպէս նաեւ ամուսինները պարտին զոհուելու աստիճան սիրել իրար, որպէսզի աստուածադիր նպատակը յաւիտեան իրագործուի:

*Նման ծիւս Խորհուրդներուն,  
Սբ. Պսակի Խորհուրդը եւս կը կարարուի ծիւսին եկեղեցիէն ներս եւ ոչ թէ դուրսը՝ պանդոկի սրահներուն մէջ, նաևու վրայ, պարտեցի մէջ եւ կամ ծովափը...*

**ՊՍԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹԻՒՆԸ՝ ՄԻԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Նման միւս Խորհուրդներուն, Սբ. Պսակի Խորհուրդը եւս կը կատարուի միայն եկեղեցիէն ներս եւ ոչ թէ դուրսը՝ պանդոկի սրահներուն մէջ, նաևու վրայ, պարտեցի մէջ եւ կամ ծովափին վրայ: Հայ Եկեղեցին ունի իր յատուկ արարողութեան կարգն ու

կանոնը, որուն համաձայն Սբ. Խորհանին առջեւ միայն քահանային ձեռքով եւ կանոնական կերպով կը կատարուի Պսակադրութիւնը, Սբ. Աւետարանի ընթերցումով, շարականներու երգեցողութեամբ եւ յատուկ աղօթքներու ընթերցումով: Կարգալոյծ կամ կարգաթող եկեղեցականի մը արտօնուած չէ Պսակ օրհնելու եւ կամ միւս Խորհուրդները կատարելու: Այս բոլորը երբեք չեն արտօներ եկեղեցիէն դուրս ուրիշ տեղ մը կատարելու զայն: Ամուսնացեալ զոյգին փափաքը եւ հանգստաւետ պայմանները երբեք նկատի չեն առնուիր մնան պարագաներու: Բացառութեան կարգով, միայն հոն՝ ուր հայ եկեղեցի չկայ, քոյր եկեղեցւոյ մէջ կարելի է կատարել Սբ. Խորհուրդը՝ հայ եկեղեցականի մը ձեռքով:

*Ամուսնալուծումը մեղքի դուռ կը բանայ եւ կը խնայարէ Աստուծոյ նպատակը...*

**ՔԱՅԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹԻՒՆԸ**

Ամուսնացեալ զոյգը անհրաժեշտ է որ ամիսներ առաջ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին հետ հանդիպում ունենայ անոր գրասենեակին մէջ գոնէ երկու առիթներով: Ամուսնութեան թուականի հարցը սկիզբէն լուծել քահանայ հօր հետ շատ կարելոր է, որպէսզի անհարկի խաչածեւում չպատահի: Յատուկ դիմումագիրը քահանայէն առնելով զոյգը կ'ամբողջացնէ զանիկա՝ հոն հարկ եղած ճշգրիտ տեղեկութիւնները արձանագրելով, որպէսզի յայտ-

նի ըլլայ նախ եթէ անոնցմէ մին կամ երկուքը Հայ Եկեղեցւոյ մէջ մկրտուած են կամ ոչ: Առանց Մկրտութեան երիտասարդ մը չի կրնար Պսակի Խորհուրդին դիմել: Նման պարագաներուն քահանան նախ կը մկրտէ եւ կը դրոշմէ ենթական ու ապա կ'ընդունի իր դիմումագիրը: Նաեւ կը պատահի որ ամուսնալուծուած ըլլայ մին կամ միւսը, եւ կամ երկուքը, երբ անհրաժեշտ կ'ըլլայ քահանային յանձնելու պետական արտօնագիրները: Նոյնպէս քահանային խորհրդատուութեան կարելոր մասը կը կազմէ ընտանեկան, բարոյական եւ ընկերային հարցերու քննարկումը՝ անխախտ պահելու միտքով կատարուելիք ամուսնութիւնը:

*Սբ. Խորհանին առջեւ միայն քահանային ձեռքով եւ կանոնական կերպով կը կատարուի Պսակադրութիւնը...*

**Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՍԲ. ՊՍԱԿԻ ԽՈՐՀՐԴՐԸ**

Ձեռնտուութիւնը եւ իրարու նկատմամբ ուխտն ու խոստումները կատարուելէն յետոյ, քահանան կ'օրհնէ ամուսնութեան մատանիները, որոնք փեսան եւ հարսը իրարու կը փոխանցեն անցընելով զանոնք ձախ ձեռքի մատնեմատին վրայ: Բեն բարձրանալով կը սկսի խորհրդակատարութիւնը Սբ. Գիրքի ընթերցումներով եւ յատուկ աղօթքներով, երբ քահանան կը պսակադրէ փեսան իբր թագաւոր եւ հարսը իբր թագուհի: Անոնց գլուխներուն